դրության ավտոմատացման միջոցառումները և այլն։

Պեոլիտի և օբսիդիանի գծով տարվող գիտա-հետազոտական աշխատանքում հիմնական համարել հետևյալ ուղղությունները՝ պեոլիտի և օբսիդիանի ուռչելու պրոցեսների հետազոտությունը, տարբեր հանքավայրերի հումքի ուսումնասիրությունը, տարբեր տիպի ագրեգատների աշխատանքի ռեժիմի հետազոտությունը, ուռած պեոլիտից ջերմամեկուսիչ շինվածքների և թեթև բետոնների արտադրության տեխնոլոգիայի մշակումը և այլն։

1959—1960 թթ. պլանի մեջ անհրաժեշտ է մտցնել կոմպլեքսային թեմա՝ ագլոմերացիոն ցանցերում եռակալման և ուռչելու պրոցեսների ֆիզիկա-քիմիական էությունն ուսումնասիրելու գծով։

Խարամային պեմզայի գծով գիտա-հետազոտական կազմակերպությունների ուշադրությունն անհրաժեշտ է դարձնել 1959—1960 թթ. մշակելու թարմ ուռած խարամի տերմիկական մշակման կառավարելի եղանակը, խարամային հալվածքների գազայնության արագ որոշման եղանակը, ուռչելու պրոցեսների տեսական հիմնավորումները և այլն։

Ագլոպորիտի արտադրությունը կատարելագործելու համար, 1959—1962 թթ. անհրաժեշտ է ապահովել՝ կավային ապառներից և ածուխ պարունակող մնացուկներից ստացվող խառը բովախառնուրդի ընտրության եղանակի մշակումը, արտադրության ռացիոնալ մեթոդների մշակումը և ագլոպորիտով թեթև բետոնների հատկությունների ճշտումը, հումքի ընտրության և ագլոպորիտի որակի գնահատման նորմատիվ փաստաթղթերի նախագծերի ճշտումը և այլն։

Խորհրդակցությունն անհրաժեշտ գտավ հարց հարուցել համապատասխան օրգանների առաջ՝ շինարարական նյութերի և կառուցվածքների Հայկական գիտա-հետազոտական ինստիտուտի ընդլայնման անհրաժեշտության մասին, նպատակ ունենալով ավելի լայն ուսումնասիրել քարե որմնանյութերի, թեթև բնական նյութերի կիրառման հետ կապված հարցերը, ինչպես նաև նրանց հիման վրա՝ թեթև բետոնների լայն կիրառումը։

Խնդրել ՍՍՌՄ Պետշինին և ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիային՝ շինարարական ֆիզիկայի և շրջափակող կոնստրուկցիաների գիտա-հետազոտական ինստիտուտի գծով կարևորագույն գիտա-հետազոտական աշխատանքների պլանի մեջ մտցնել ուռած հանքային բնական նյութերի թեթև բետոններից պատրաստված շրջափակող կոնստրուկցիաների մշակումն ու ուսումնասիրությունը։

Գիտա-հետազոտական աշխատանքի կազմակերպման գծով անհրաժեշտ համարել զարգացնելու գիտա-հետազոտական ինստիտուտների, գործարանների, գործարանային գիտա-հետազոտական լաբորատորիաների և կառույցների աշխատողների ստեղծարար համագործակցությունը։

Նախագծման հարցերի գծով խնդրել ՍՍՌՄ Պետշինին՝ ընդարձակել այն ինստիտուտների թիվը, որոնք զբաղվում են արհեստական թեթև լցանյութերի գործարանների նախագծմամբ։

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԱՎՏՈՄԱՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԾՈՎ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիային կից կազմակերպվել է Սովետական Միության Ազգային կոմիտե ավտոմատիկ կառավարման գծով։

Ավտոմատիկ կառավարման գծով միջազգային ֆեդերացիան (ԻՖԱԿ) ավտոմատիկ կառավարման գծով Սովետական Միության Ազգային կոմիտեին հանձնարարել է կազմակերպել ու անցկացնել Առաջին միջազգային կոնգրեսը, որը կկայանա Մոսկվայում, 1960 թ. հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը։

Կոնգրեսի գիտական ծրագիրը

Կոնգրեսում աշխարհի շատ երկրներից կլսվեն ու կքննարկվեն զեկուցումներ, որոնք կընդգրկեն տեսական և կիրառական հարցեր ավտոմատիկ կարգավորման ու կառավարման, ավտոմատիկայի

ու տելեմեխանիկայի տեխնիկական միջոցների (ներառյալ հաշվիչ սարքերը) բնագավառից, ավտոմատիկ կարգավորման ու կառավարման արդյունաբերական կիրառությունը (ներառյալ հաշվիչ սարքերի կիրառությունը) տեխնիկայի զանազան ճյուղերի նկատմամբ։

Սովետական Միության Ազգային կոմիտեին կից կազմակերպվել են հետևյալ գիտա-տեխնիկական կոմիտեները, որոնց հանձնարարվել է Սովետական Միությունից կոնգրեսի համար գիտա-տեխնիկական զեկուցումների նախապատրաստումն ու ընտրությունը։

1. Ավտոմատիկ կարգավորման և կառավարման տեսության ԳՏԿ.

2. Ավտոմատիկայի և տելեմեխանիկայի տեխնիկական միջոցների ԳՏԿ.

3. Ավտոմատացված էլեկտրահաղորդակի և էլեկտրական մեքենաների կիրառության ԳՏԿ.

4. Մետալուրգիական, քիմիական, էներգետիկ և արդյունաբերության մյուս ճյուղերի անընդհատ արտադրական պրոցեսների ավտոմատացման ԳՏԿ.

5. Մեքենաշինության մեջ արտադրական պրոցեսների ավտոմատացման ԳՏԿ.

6. Տերմինաբանական ԳՏԿ։

Կոնգրեսը պետք է ընթանա հետևյալ նշանաբանով. «Տեսությանը գործնական կիրառելիություն, տեխնիկական միջոցներին՝ առավելագույն հուսալիություն, արտադրության ավտոմատացմանը՝ բարձր էֆեկտիվություն»։

Զեկուցումների ներկայացման կարգը

Կոնգրեսի համար զեկուցումները ներկայացվում են ավտոմատիկ կառավարման գծով Սովետական Միության Ազգային կոմիտեի միջոցով, հետևյալ հասցեով՝ Москва, И—53, Каланчевская ул. 15—а.

Կոնգրեսի համար նյութերը պետք է ուղարկել Ազգային կոմիտե, հետևյալ մակագրով՝

«Ավտոմատիկայի գծով կոնգրեսի համար»։

Բոլորը, որոնք ցանկանում են Հայաստանից կոնգրեսին զեկուցումներ ներկայացնել, պետք է մինչև 1959 թ. փետրվարի 1-ը ավտոմատիկ կառավարման գծով Սովետական Միության Ազգային կոմիտեի Երևանի տերիտորիալ խմբի հասցեով (Երևան, փոստարկղ № 31) ուղարկեն համառոտ անոտացիաներ ռուսերեն և անգլերեն լեզուներով (առանց նկարների, մեքենագրված տեքստը 3 էջից ոչ ավելի) վեց օրինակից, ցույց տալով բնակարանի ու աշխատանքային վայրի հասցեները և հեռախոսների № №-ը։

Հավանության արժանացած անոտացիաները մինչև 1959 թ. փետրվարի 15-ը կուղարկվեն ավտոմատիկ կառավարման գծով ՍՍՌՄ Ազգային կոմիտեին։

Զեկուցումների լրիվ տեքստերը վեց օրինակից, 12 մեքենագրված էջից ոչ ավելի ծավալով (2 ինտերվալով), պետք է պարունակեն մակագրեր ունեցող 5 նկարից ոչ ավելի և ներկայացվեն 1959 թ. մայիսի 5-ից ոչ ուշ, ձևավորված լինեն հոդվածների նախապատրաստման կանոնների համաձայն, «Ավտոմատիկա և տելեմեխանիկա» ամսագրում հրապարակելու համար։

Բոլոր հավանության արժանացած զեկուցումները նախօրոք հրապարակվելու են ռուսերեն և անգլերեն լեզուներով։

Ազգային կոմիտեն խնդրում է բոլոր հեղինակներին իրենց անոտացիաներն ու զեկուցումները ներկայացնել ոչ միայն ռուսերեն, այլև անգլերեն լեզվով։

Ազգային կոմիտեն հեղինակներին կհաղորդի ԻՖԱԿ-ի Գործկոմի որոշումը կոնգրեսի ծրագրի մեջ զեկուցումը մտցնելու մասին։

Կոնգրեսի համար ՍՍՌՄ դելեգացիան կազմելու կարգը կհաղորդվի լրացուցիչ կերպով։

1959 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՑՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Արդյունաբերության ու շինարարության կառավարման վերակառուցումը է՛լ ավելի ակտուալ դարձրեց պայմանագրային կարգապահության ամրապնդման հարցը, որը երկրի տնտեսական կյանքում շարունակ ունեցել է և ունի շատ մեծ նշանակություն։